որ թատրոնական բանակուի վրա ոչ մի նամակ այլ ևս չենք տպի, բայց այս համարում դարձեալ մի նամակ ենք տպում, որ ստացանք Ա-բաս-Թումանից, պ. Սահակ Սաֆրազեանցից։ Այսուհետև ոչ մի նամակ էլ չենք տպի այդ խնդրի մասին։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են։ «Մեր Նահանգի կալուածական խնդիրը վճռելու, կալուածատէրերի հողերը գնահատելու համար Թիֆլիսից ուղարկած յանձնաժողովը մինչև այժմ չէ գալիս։ Գլխաւոր վարչութիւնը իսաց է տուել մեր կալուածատէրերին որ այդ յանձնաժողովը կուշանայ, իսկ տեղիս Նահանգապետին գրել է որ իր սեփական միջոցներով գնահատել տայ հողերը, որպէս զի հեշտացնի և չտապացնի գիւղացիների ձեռքով կալուածական հողերի յետ գնելու գործը։ Եւ ահա Նահանգական վարչութիւնը նշանակել է երկու գնահատողների, որոնք ոչ երկրի պահանջների հետ ծանօթ են, ոչ էլ առհասարակ կալուածական հարցի հետ։ Մի և նոյն ժամանակ որպէս ներկայացուցիչներ կալուածատէրերի և գիւղացիների կողմից նշանակված են ոչ թէ ճշմարիտ կալուածատէրը և գիւղացին, այլ արքունի պաշտօնեաներ, մի կողմից, այսինքն կալուածատէրերի կողմից նշանակված է Ս. Աղամալեան, հաշտարար միջնորդը, որ կախված է կառավարութիւնից, որովհետև նրանից ռօճիկ է ստանում և ունի մի կալուածք որ իր արդիւնքով շատ շատ իրան և իր ընտանիքը կարող է չոր հացով կերակրելու մի տարվայ ընթացքում, միւս կողմից, այսինքն որպէս գիւղացիների ներկայացուցիչ, նշանակված է Նահանգական վարչութեան մի պաշտօնեայ, պ. Խզբաշով։ Իսկ այստեղի կալուածատէրերի չրջանում տիրում է կատարեալ ապատիա, անտգութիւն։ Կալուածական հարցի այսպէս թէ այնպէս վճռվելուց նրանք կարող են մեծ վնասներ կրել,—և այդ միլիոնների արժողութեան գործերը կառավարութեան առաջ պաշտպանելու համար, նրանք, այդ բոլոր հարուստ կալուածատէրերը՝ հայերը և թիւրքերը, ընտրում են պ. Բարսեղ Եղիազարեանցին որ համարվում է շատ խելօք մարդ, որովհետև կօպէկանոց ադվոկատութիւն է անում Նահանգական դատարանում, մեծ մասամբ խելօք կերպով լռում է հասարակութեան մէջ, քթի վրա ակնոցներ ունի դրած և մնդանից էլ աւելի չէ հասկանում կալուածական խնդիրը։ Միլիոնների արժողութեան գործերը պաշտպանելու համար սրան են ընտրում, ուղարկում են Թիֆլիս և նրան տալիս են 400 բուբլ ճանապարհածախսի և Թիֆլիսում գործերը վարելու համար։»

—

ՂԱՐԱՔԼԻՍԱՅԻՑ մեզ գրում են։ «Ահա մեր Ղարաքլիսայի անտառապետի գործերից մինը։ Ղաչաղան գիւղից մի քանի սայլապաններ, որինաւոր տոմսակով Լօռու անտառից փայտ էին բերում։ Անտառապետը խլում է նրանց ձեռքից բիլէտը և անպաշտպան գիւղացիների բարձած սայլերը կանգնած են մնում ճանապարհի վրա։ Գիւղացիները երկու անգամ հեռագիր են ուղարկում Նահանգապետին։ Հետեանքների մասին տեղեկութիւն չունեմ։»

—

Զխոր գիւղից որ կիսով չափ բնակեցված է հայերով և վրացիներով, մեզ գրում են որ վրացի ռամիկները իրանց թոյլ են տալիս անպատիժ ծեծել հայերին, հայհոյել նրանց կրօնը և այլն։ Երբ գիւղական դատարանում այդ մասին հայ գիւղացիները գանգատվում են, դատարանը և տանուտէրը, որ ինքն վրացի է, մեծ մասամբ արդարացնում են վրացիներին։

—

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրումեն։ «Ղուբայի ժողովուրդը ոչ թէ միայն ինքն իր դպրոցի մասին հոգ չէ տանում, այլ և հոգայողներին արգելում է։ Անցեալ ապրիլ ամսից սկսած աշակերտներից ոմանք խոստացան իւրաքանչիւրը ամսական 25 կօպէկ վճարել դպրոցի վարչութեանը ջրի և ծառայի փող։ Եւ ինչ էք կարծում, ծնողները այդ խմանալով, սկսեցին դպրոցից դուրս բերել իրանց մանուկներին այդ 25 կօպէկը չը վճարելու համար։ Պղանից յետոյ ինչ կարելի է ասել այդ տեսակ ժողովրդից։ Դպրոցը ամենաանմխիթար դրութեան մէջ է։»

—

Լօռու գաւառի Ուզունլար գիւղից մեզ գրում են։ «Մեր գիւղում ուսումնարան չը կայ։ Էջմիածինը տարեկան մի յայտնի գումար Լօռու եկեղեցական կալուածներից վայելում է, բայց գիւղերին միայն այն օգուտ է տալիս, որ անդադար քահանայ է ձեռնադրում տղէա տիրացուներին։ Ժողովուրդը կատարելապէս դուրկ է բարոյական, կրօնական ուսումից և եթէ որ և է յանցանքներ չէ գործում, դրա պատճառը մի կողմից իշխանութեան առջև սարսափն է, իսկ միւս կողմից հային յատուկ բնական բարոյական զգացմունքն է։ Լօռու գործակատար հայրը անտանելի է դարձել ժողովրդին իր վարմունքով։ Նա կատարելապէս կոդոպոում է և կենդանի մարդկանց և ննջեցեալներին։»

—

ՈՒԶՈՒՆԼԱՐԻՑ մեզ գրում են։ «Լօռու գաւառին կից Զամբաղչի չօսէ ճանապարհի շինութեան համար մեր հասարակութիւնը վճարից 2000 ր. դրամ, տեղական պաշտօնավարների կարգադրութեամբ և հրամանով, թէև հասարակութիւնը այդ ճանապարհից տարիների ընթացքում ոչինչ օգուտ չէ կարող ունենալ։»

—

Յայտնի է որ «Голосъ» լրագիրը դադարեցրած է կառավարութեան հրամանով վեց ամսով։ Այժմ լսում ենք որ նրանք, որոնք գրված էին «Գոլոս» լրագրին ամբողջ տարով, կը ստանան այդ լրագրի տեղ մի նոր լրագիր որ արդէն թոյլատրութիւն է ստացել հրատարակվելու պ. Մոդէստովի խմբագրութեամբ և որի վերնագիրը կը լինի «Новая Газета.»

—

Յաւելով յայտնում ենք որ Թիֆլիսում հրատարակվող «Кавказскій Курьеръ» լրագիրը ժամանակաւորապէս դադարում է հրատարակվելուց։

—

ՅԱՂՆԱԽԻՑ մեզ գրում են։ «Այս տարվան կանոնաւոր անձրևների պատճառով հայի բերքը շատ լաւ է այստեղ։ Միայն գինու սակաւութիւնը ակներև է, որովհետև կարկտից ազատված խաղողի մեծ մասը մոխրով է վնասված։ Ալիւրի պուդը այժմ արժէ 1 ր. 40 կ., պանիրը 8 ր., իւղը 18—20 բուբլ, մի ֆունտը 9 կոպէկ։ Այս կողմերում և նոյն իսկ քաղաքում երևացել են կարմրուկ և սկարլատին հիւանդութիւնները։»

—

ՄՕԶԴՈԿԻՑ մեզ գրում են հետեւեալը։ «Թեմական առաջնորդ Գէորգ արքեպիսկոպոսը կենալով Մոզդոկում մի քանի շաբաթ, ոչինչ չը չինեց և եկեղեցիները իզուր նրա պատճառով ծախսեցին 250 բուբլ։ Իսկ մնացեալ նա, այստեղ ոչինչ չը չինելուց յետոյ, մեկնեցաւ Պատրիգորսկ հանգստանալու համար։»

—

«Южной Край» լրագիրը հաղորդում է որ Խարկովում դիտաւորութիւն կայ հիմնել մի բատրիոտական երևելի բանաստեղծ Լերմոնտովի անունով, որով կօժանդակվի միջոց համալսարանի մի ուսանող լեգուագիտական բաժնի։

—

Մոզդոկից մեզ հաղորդում են որ այդտեղ բարկվել է առաջին հարկաւորութեան մթերքների էժանութիւնը։ Ցոյս կայ որ երկու, երեք ամսից յետոյ մթերքները աւելի էլ կէժանանան։ Այժմ հաց ի ֆունտը ծախվում է 3 կոպէկով, մսի ֆունտը 5 կ., լրմնձը 6 կ., մի սայլ ձմերուկ, որ կը պարունակէ իր մէջ 150—200 հատ, արժէ 2 բուբլ։ Մրգերն էլ էժան են։

—

Օգոստոսի 1-ից մինչև 15-ը Թիֆլիսում մթերքները կը ծախվեն հետեւեալ գներով։ Հայը ցորենի առաջին տեսակի, ֆունտը արժէ $5^1/_2$ կ., երկրորդ 4 կ., տեղական ձեով թխած ցորենի հացը առաջին տեսակի 6 կ., երկրորդ $4^1/_2$ կ., ցորենի և կրուպչատկայի այրելից խառն թխած լավաշ ասված հացը առաջին տեսակի ֆունտը 7 կ., երկրորդ $5^1/_2$ կ., երրորդ 5 կ.։ Տաւարի մսի ֆունտը առաջին տեսակի արժէ 9 կ., երկրորդ 7 կ., սուկի 15 կ., ոչխարի մսի ֆունտը 9 կոպէկ։

—

Վերջին ժամանակները ամբողջ ռուսաց մամուլը սկսել է սաստիկ հետաքրքրվել Ռուսաստանի ազանդաւորների կեանքով, որոնք շատ բազմաթիւ են Ռուսաստանում, սկսել է հետազօտել նրանց վարդապետութիւնները խղճմտաբար կերպով։ Ազանդների ամենաջերմ հետազօտողը Պրուգավին գրող է, որ ապում էր յօդուածներ թէ «Голосъ» լրագրում և թէ «Русская Мысль» ամսագրում, որ հրատարակվում է Մոսկվայում և համարվում է համալսարանի երիտասարդ պրոֆէսորների օրգան։ Կաշխատենք ծանօթացնել հայ հասարակութեանը ռուս այլ և այլ ազանդների հետ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

Ֆրանսիական արտաքին գործերի մինիստր Բարտելեմի-Սենտ-Իլեր, պատասխանելով դուքս Բրոլիի հարցին, ասաց մօտաւորապէս հետեւեալը։ „Կատարող իշխանութիւնը երբէք չէ ձգտել իրացնել պարլամենտին պատկանած իրաւունքը պատերազմ յայտնելու և խաղաղութիւն հաստատելու մասին։ Մենք չենք պատերազմել Տունիսի բէյի հետ, այլ նրա հետ համաձայնվելով, ճգնցինք ապստամբութիւնը զրեթէ առանց պատերազմի։ Սֆաքսի ռմբակոծութիւնը անհրաժեշտ էր այնտեղ հանգստութիւն վերականգնելու համար։ Մենք պարտաւոր էինք այդ անել։ Կարելի էր նախատեսել, որ մենք, ինչպէս օտարականներ, ընդդիմադրութեան կը հանդիպէինք Տունիսի ազգաբնակութեան կողմից։ Բայց մենք թէ Տունիսի և թէ Եւրոպայի համար ամենալաւ կարգեր հաստատեցինք։ Մենք ամբողջ տաս տարիներ արշաւանքների էինք համբերում մեր երկրի վրա, որոնց Տունիսի բէյը անկարող էր արգելել։ Տունիսի կառավարութեան մէջ մեր դէմ թշնամական ուղղութիւն սկսվեցաւ, որի պատճառները ես չեմ քննի։ Մենք պէտք է այդ բանին վերջ դնէինք և Տունիսի կառավարութեանը մեզ բարեկամ դարձնէինք։ Մայիսի 12-ին ստորագրված դաշնադիրը ցանկալի էր Տունիսի բէյի համար և նրա մէջ ոչինչ նոր բան չը կայ։ Տունիսի արշաւանքը անհրաժեշտ էր և դեռ Բերլինի կոնգրեսի ժամանակ նա չափազանց բնական էր համարվում։ Բայց կրկնում եմ, որ մենք չենք ցանկանում երկիրներ նուաճել և, եթէ մենք Տունիսի մէջ դրաւել ենք մի քանի կէտեր, այդ բանն էլ արել ենք կարգապահութիւնը վերականգնելու համար։ Մայիսի 12-ի դաշնագիրը արդէն առաջ իր պտուղները բերեց։ Բէյ դէպի մեզ այժմ հաւատարմութեամբ է վերաբերվում։ Տրիպոլիսի հարցի վերաբերութեամբ, որ լրագիրները անտեղի բարձրացրին, ես աշխատեցի հանգստացնել Անգլիային վերջնական յայտնութեամբ, որ Տրիպոլիսը Ֆրանսիայի հետ միացնելու միտքը մի անպտուղ երազ է, և դրանից աւելի անգլիացիներին ոչինչ չեմ կարող ասել։ Ինչ կը վերաբերի Բ. Դրան դերիշխանութեանը Տունիսի վրա, պէտք է յայտնեմ, որ Ֆրանսիան երբէք չէ ճանաչել այդ գերիշխանութիւնը։ Խոստակ Բ. Գուսը մեր յայտնութիւնները այդ առարկայի մասին բարեկամաբար ընդունեց և աշխատում էր արգելքներ չը դնել մեր գործողութիւններին Տունիսի մէջ։

Ազգասիրութեան պակասութեան մէջ մեզ ոչ ոք չէ կարող նախատել։ Այսպէս թէ այնպէս Տունիսի մէջ կատարած գործը կը ծառայի մեր ապահովութեանը և երկրին պատիւ կը բերէ։“

Բրոլի հերցոգը նկատեց, որ նա բաւական է մինիստրի մեկնութիւններից։

Որովհետև շուտով լինելու են նոր պատգամաւորների ընտրութիւններ և Գամբետայի նախագահական ժամանակամիջոցը լրանում է, նա դուրս է գնում Բուրբոնեան պալատից, որի մէջ պատգամաւորների ժողովի նախագահն է ապրում։ Գամբետա իբրև մասնաւոր մարդ անցնում է իր հին բնակարանը։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ամերիկայից հաղորդում են որ Գարֆիլդ նախագահի առողջութիւնը հետզհետէ բարւոքվում է։

—«Մասիս» մէջ կարդում ենք հետեւեալը։ «Ս. պատրիարքը Բալուի գիւղերու հայ և թիւրք հողագործաց և պէյերու միջև ծագած հինաւուրց կալուածական խնդրոյն վրա վերջին օրերս թագրիր մը մատուցած լլնելով Բ. Դուռը Քարբերդի կուսակալութեան ուղղեալ հրամանագիր մը տուաւ յանձնարարելով որ պատրիարքարանի գանգատանաց նիւթ եղող այս խնդիրը քննէ և արդիւնքը տեղեկագրէ։ Քարբերդի կուսակալ, փաշա. Ապտուլլահ-փաշան, որոյ արդարասիրութիւնը շատերը կը հոչակեն, մեծ ծառայութիւն պիտի բնէ բալուցի հայ և թիւրք հասարակութեան, եթէ հողագործ ժողովրդեան արդար իրաւունքն անաչառութեամբ պաշտպանէ, առանց բնաւ ակնածելու պէյերան ազդեցութենէն։»

—«Մասիս» լսել է որ հայոց և չէրնօգօրիական խնդիրների վերաբերութեամբ տարաձայնութիւն է ծագել Կ. Պոլսի անգլիական և ռուս դեսպանների մէջ։ Առաջինը պնդում է որ հայոց խնդիրը այժմ պէտք է քննվի, իսկ ռուսաց դեսպանը կարծում է որ հայոց խնդրին հերթը դեռ չէ հասել, քանի որ Չէրնօգօրիայի խնդիրը վճռված չէ։

—Իշխան Բիսմարկ խմբագրել է տալիս առևտրական դաշնագրութեան մի ծրագիր Թիւրքիայի հետ, որ երկու տէրութիւններին էլ շահաւէտ պէտք է լինի։

—Ֆրանսիական «Débats» լրագրին արգելված է Թիւրքիայի սահմանների մէջ մուտքը։

—«Stamboul» լրագիրը հաղորդում է որ այս օրերս լորդ Դիւֆերին մի տեսակցութիւն ունեցաւ Ասիմ-փաշայի և Դաղեան Յարութիւն էֆէնդիի հետ, որոնց հետ երկար խօսակցեց Հայաստանի բարենորոգումների խնդրի վրա։

—Ֆորնսոն, որ նշանակվեցաւ անգլիական դեսպան Ս. Պետերբուրգում, չուտով ուղևորվելու է Անգլիայից դէպի Ռուսաստան։

—Վարնայից հեռագրում են որ Բոլգարիայի իշխանը թոյլ տուեց մի քանի հրէայ ընտանիքներին, որոնք գաղթած են Ռուսաստանից, բնակվել Բոլգարիայում։

—Հեռագիրները հաղորդում են որ Գամբետա գնում է Ֆոր քաղաք ընտրողական չարժման վրա անձնական ներգործութիւն ունենալու համար։

—«Порядокъ» լրագիրը հաղորդում է որ գերմանական ազատամիտ կուսակցութիւնը ամեն ջանք է անում կրկին մտնել կղերական կուսակցութեանը, վերջ տալ կաթոլիկութեան դէմ հալածանքներին և ձեռք ձեռքի տուած կենտրոնի կուսակցութեան հետ միացած ոյժերով գործել իշխան Բիսմարկի քանաւոր գիտաւորութիւնների դէմ։ Հեռագրով հաղորդում են որ մայիսեան օրէնքները Գերմանիայում վերաքննութեան կենթարկվին։

—Աւստրիայի կայսրը չուտով մի տեսակցութիւն կունենայ Սաքսոնիայի թագաւորի հետ, Մրնխէն քաղաքում։

—Անգլիական արմատական կուսակցութեան ներկայացուցիչ Բրէդլաֆ, որին չեն թոյլ տալիս իր տեղը բռնել համայնքների ժողովում, այս օրերս նորից փորձեց մտնել պարլամենտ և նստել իր տեղի վրա, որպէս ազգի պատգամաւոր։ Բայց պարլամենտի մուտքի մէջ նրան կանգնեցրեց մի ոստիկան Դէնինգ ազգանունով և չը թոյլ տուեց նրան մտնել պարլամենտ։ Այն ժամանակ Բրէդլաֆ դիմեց դատարանին և գանգատ ներկայացրեց Դենինգի դէմ։ Դործը կը քննվի այս օրերս։

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 յուլիսի։ Պետական բանկի $5^0/_0$ տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ր., 87 կ. երկրորդ 94 ր. 75 կ., երրորդ 94 ր. 75 կ., չորրորդ 92 ր. 25 կ., ներքին առաջին $5^0/_0$ փոխառութեան տոմսակը արժէ 224 ր. 75., երկրորդ 223 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 91 ր. 50 կ., երկրորդ 91 ր. 50 կ., երրորդ 91 ր. 50 կ., սուկի 7 ր. 80 կ.։ Ռուսաց 1 բուբլ Լօնդօնի վրա արժէ 25,71 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 219 մարկ 25 պֆ.։ Փարիզի վրա արժէ 270 ֆրանկ 25 սանտիմ։ Բօրսայի տրամադրութիւնը ամուր է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ